

Ս. ՏԵՂԵԱՅ ԴՐԻԱՆՔՆ

Փիստուար 26ին, երեք աւագ համայնք-ներուն ներկայացուցիչները ժողովին նստեցան երուսաղէմի Վ.սեմ. Կառավարիչին զրասինեակը, ճշդելու համար Մեծ Պահոց եւ Ս. Զատկի զրգանի սրբազն արարողութիւններու ժամանակացոյցը, Ս. Յարութեան Տաճարէն ներս :

Հստ ընկալեալ աւանդութեան, Մեծ Պահոց զրգանի ամէն Կիրապի եւ յաջորդաբար ժերեք Պատրիարքները Հրաշափառուով մուտք կը գործեն Ս. Յարութեան Տաճարէն ներս, յատու կ մեծահանդէս թափօրով եւ շրեղ ծիսակատարութեամբ. Խրաքանչիւր համայնք ներկայացուց այս տարուան թուականները մուտքերուն եւ տօնակատարութեանց :

Նոյն առթիւ կազմուեցաւ նսեւ Զատկան զրգանի ժամանակացոյցը, առանց որեւէ դժուարութեան, որովհետեւ որեւէ առարկութիւն չկատարուեցաւ որեւէ իրաւունքի մասին:

Վերջիշեալ երկու ժամանակացոյցները տպագրուեցան եւ զրկուեցան համայնքներուն ի գործադրութիւն:

* * *

Ապրիլի 4ին, Դշ. օր կէսօրէ առաջ ժամը 10ին, երեք համայնքներու ներկայացուցիչները եւ իրենց նայտարապետները հրաւիրուցան Բազարի Վ.սեմ. Կառավարիչն մօտ: Նորին Վսեմութիւնը յայտնեց թէ մտահողիչ տեղեկագիրներ ստացած է, բայ որում, Ս. Յարութեան Տաճարէն ներս կատարուած պեղումները եւ բոյորաշէնչն մասի մը փայտեա ամրացումներու վերացումը կըրնայ տկարացուցած ըլլալ շշնքը, ինչ որ մասնաւոր կարեւորութիւն կը ստանայ ու խտաւորութեան օրերուն, մօտալուտ Զատկի առիթով:

Երեք նարարապետները հակիրճ բացարութեամբ մը վստահեցուցին Նորին Վսեմութիւնը թէ կատարուած պեղումները եւ ամրացումները աւելի ապահով կ'ընեն շնչոր, թէ մնացեալ երկու փոսերը, որոնք տակաւին լեցուած չեն, պիտի լեցուին յաջորդ շարթուան ընթացքին եւ թէ մանաւանդ բոլորաշէնի մէկ մասին բացումը եւ փայտեայ ամրացումներուն վերացումը որ եւէ կիրապու չի' կրնար ազդել շնչնքի ընդհանուր երկաթեայ ամրացումներուն վրայ, որոնք երեսուն տարիներէ ի վեր կը պաշտպանեն վտանգուած շնչնքը:

Նորին Վսեմութիւնը շնորհակալութիւն յայտնեց համայնքներուն եւ իր ուրախութիւնը որ Ս. Յարութեան Տաճարի նորոգութիւնները կ'ընթանան կաննաւոր կիրապով:

* * *

Սաղիմական աւանդութիւն մը կ'ուզէ որ Համբարձման լերան վրայ կատարուէ Համբարձման տօնակատարութիւն տարին երկու անգամ. մին՝ Մեծ Պահոց Վեցերորդ (Դալստեան) Կիրակիին, իսկ միւսը՝ Համբարձման տօնին:

Այս տարի եւս կատարուեցաւ Համբարձման առաջին տօնակատարութիւնը, հախագահութեամբ Ս. Պատրիարքը հօր եւ մասնակցութեամբ ամբողջ Միաբանութեան:

Այս առթիւ կը վերատպինք այստեղ Համբարձման լերան վրայ հայոց վայելած անցեալի փառաւոր եւ այսօրուան անշրացած դիրքի մասին հետեւեալ գրութիւնը:

Գրսոյկը, որմէ կատարած ենք մեր արտատպումը կը կոչուի սէովանդակաւրիւն Ազգային Անդմականութեանց», եւ կը վերագրուի Սահակ Նպա. Խապայիանի (ապա Կաթողիկոս Կիլիկիոյ): Տպուած է երուսալէմ, 1-90ին: